Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

ք. Էջմիածին ***23.02.2024թ.***

2024թ. փետրվարի 23-ին ժամը 11:00-ին Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի շենքում (հասցե ք. Էջմիածին, Կոմիտասի հրապարակ, 0 շենք), տեղի ունեցավ Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Վաղարշապատի համայնքապետարան պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ փետրվարի 22-ը ներառյալ իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Վաղարշապատի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննակումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը մասնակցել են պատվիրատու ընկերության («ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ), նախագծային («Միդիս» ՍՊԸ) և ՇՄԱԳ իրականացվող («Գրինթայմ» ՍՊԸ) կազմակերպությունների, Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Էջմիածին համայնքի բնակիչներ (ընդհանուր 24 մասնակից):

Նախագծի ներկայացում և քննարկում

Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ նախաձեռնությամբ մշակվել է «Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը», որը ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա է բնապահպանական փորձաքննության: Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայացնելու նպատակով նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանին:

Ք. Սահակյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանրային քննարկման նպատակը: Նա նշեց, որ նախագիծը մշակվել է ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների, ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև Պատվիրատուի պահանջների համաձայն: Նախագծային լուծումների համաձայն բնակելի համալիրի տարածքի ընդհանուր կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500մ² և ՀՀ օրենսդրության համաձայն այն ենթակա է բնապահպանական փորձաքննության: Ք.Սահակյանը հավելեց, որ շրջակա միջավայրի փորձաքննական գործընթացի շրջանակներում սա առաջին հանրային լսումն է և դեռևս նախատեսվում է ունենալ ևս մեկ նման հանդիպում:

Նա մանրամասնեց, որ նոր բնակելի համալիրի նախագծումն իրականացվել է մանրակրկիտ ռազմավարելով գոյություն ունեցող

տական առանձնահատկություններն ու կառուցվածքը: Նախկին կինոթատրոնի շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումն իրականացվել է «ՎԱԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից:

Իրականացված ուսումնասիրությունների համաձայն շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմել է 48%, ինչը նշանակում է, որ շենքի տեխնիկական վիճակը դասվում է 3-րդ աստիճանի (անբավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել հին կինոշենքի տեղում՝ պահպանելով ճակատային մասի կամարաձև հատվածը: Սա նուրբ նախագիծ է և նոր բնակելի համալիրը կհամատեղի ժամանակակից տեխնոլոգիական լուծումներն ու հարմարավետությունը ավանդական ճարտարապետական տարրերի հետ:

Գոյություն ունեցող նախկին կինոթատրոնի շենքի քանդումն իրականացվել է համաձայն քանդման թույլտվության՝ տրված Էջմիածի քաղաքապետարանի կողմից 2023թ. հուլիս ամսին: Սակայն պահպանվել է ճակատային կամարաձև հատվածը՝ շուրջ 330մ^2 մակերեսով, որը կմիացվի նորակառույց կցակառույցին, թույլ տալով որ քաղաքի բնակիչները կրկին վայելեն նախկին կինոթատրոնի մթնոլորտը: Դա հաշվի առնելով կառույցում նախատեսվում է ունենալ 2 կինոդահլիճներ՝ ընդհանուր առմամբ 100 նստատեղով:

Բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է լինելու 2 ստորգետնյա և 10 վերգետնյա հարկերից, որը շինության առավելագույն հարկայնությունն է լինելու: Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղիներ՝ ընդհանուր առմամբ 64 մեքենայի համար:

Նա նշեց, որ բնակելի համալիրի առաջին հարկում հիմնականում տեղեկայված են լինելու հասարակական նշանակության տարածքները, որոնք իրականացված են բնակելի տարածքներից առանձնացված մուտքերով՝ հարմարեցված բնակչության սակավաշարժ և հաշվանդամ խմբերի ազատ տեղաշարժին: Մնացած հարկերը լինելու են բնակելի՝ ընդհանուր 100 բնակարաններով, որոնք կունենան 52-97 մ^2 մակերեսներ: Տարածքի հետ կապված ինժեներային ենթակառուցվածքները առկա են, ձեռք են բերված համապատասխան տեխնիկական պայմանները և իրակաացված են նախագծային լուծումները. ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում: Ջրամատակարարումը կիրականացվի 400մմ տրամագծի խողովակով Անդրանիկի փողոցով անցնող ջրատարից, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել տարածքի հարևանությամբ անցնող կոյուղատարին՝ 400մմ տրամագծի խողովակով, գազմատակարարումը կիրականացվի համաձայն Գազպրոմ Արմենիա ընկերության տեխ. պայմանի, այսինքն շենքում լինելու է անհատական ջեռուցում: Նույնը նաև կապված էլեկտրամատակարարման հետ՝ ՀԷՑ-ից ձեռք բերված տեխ. պայմանի համաձայն:

Այնուհետև Ք.Սահակյանը անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունների մանրամասներին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները: Նա նշեց, որ բնապահպանական կառավարման պլանը լինելու է շինարարության կլապալառուի պայմանագրի մի մաս, որում ամփոփված միջոցառումների կատարումը Կալառուի համար լինելու են պարտադիր:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է քաղաքային ակտիվ միջավայրում, որն արդեն ուրբանացված տարածք է:

Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ, երթևեկության կառավարում և այլն), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի: Նա նաև հավելեց, որ գործելու է բողարկման ճկուն համակարգ, որի շրջանակներում ցանկացած ժամանակ, եթե բնակիչները կունենան առաջարկություններ, բողոքներ, դիտողություններ, նրանք կարող են դիմել ինչպես կառուցապատողին, այնպել էլ համայնքապետարանին, քանի որ ապահովվելու է նախաձեռնող-կառուցապատող-համայնքապետարան համագործակցության շղթան:

Ք. Սահակյանի կողմից կարևորվեց, որ բոլոր լուծումներն ու հարցերը մանրամասն քննարկվել են համայնքապետարանի հետ, քանի որ նախատեսվող շինությունը տեղակայված է լինելու քաղաքի կետրոնական մասում, կարելի է ասել քաղաքի սրտում: Նա նաև նշեց, որ նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի 630մ^2:

Ամփոփելով իր ելույթը Ք.Սահակյանը նշեց, որ ներկայացված բնակելի համալիրն՝ իր ճարտարապետական լուծումներով, հնարավորություն կտա թաղամասի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել նորառոճ և հաճելի միջավայրում՝ միաժամանակ ունենալով տվյալ տարածքի համար էսթետիկ և շրջակա միջավայրին հարիր լուծումներ:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

N	Հարց	Պատասխան
1.	*Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ* Որ խնդրեմ կներկայնաիք նորից, ես ուղղակի չլսեցի:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Ես սկզբում թեև ներկայացել էի, բայց ևս մեկ անգամ ներկայանամ: Ես Քրիստինե Սահակյանն եմ, պատասխանատու եմ նախագծային լուծումների բնապահպանական մասի համար, այսինքն բնապահպանական բոլոր աշխատանքները, հաշվետվությունները՝ ուղղված համապատասխան եզրակացության ձեռք բերմանը, ինչպես նաև հանրային լսումները համակարգվում են իմ կողմից:
2.	*Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ* Մասնագիտությունը, դուք որևէ նախարարությունից եք:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Ես մասնագիտությամբ բնապահպան եմ, և ոչ, որևէ նախարարությունից չեմ: Շրջակա միջավայրի նախարարությունից մենք ներկայացուցիչ կունենանք երկրորդ հանրային լսման ժամանակ:
3.	*Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ* Դուք որտեղ եք աշխատում, ես ուզում էի իմանալ դուք իրավասու եք, որ այսօր ներկայացնում եք:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Տվյալ պարագայում ես հանդիսանում եմ բնապահպանության մասնագետ, իսկ եթե զուտ թե որտեղ եմ աշխատում, ապա ասեմ, որ աշխատում են Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում՝ գեոէկոլոգիայի ամբիոնում, այսինքն ես տվյալ ոլորտի մասնագետ եմ և իրավասու եմ, քանի որ բնապահպանական բոլոր աշխատանքներն իրականցվել են իմ կողմից: Գործընթացային առումով ասեմ, որ իրականացված աշխատանքների արդյունքում համապատասխան հաշվետվություն է կազմվում, որը ներկայացվում է շրջակա միջավայրի նախարարություն: Ամփոխ փաթեթը ուսումնասիրելուց հետո նախարարությունն անելու է երկրորդ հանրային լսումը, որի պատասխանատուն շրջակա միջավայրի նախարարությունն է և նոր դրանից հետո եզրակացություն տրամադրելու գործընթացն է լինելու:

4.	*<u>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</u>* Այսինքն այսօրվա հանդիպումն ուղակի գալոչկա դնելու համար է:	*<u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u>* Ոչ այս հանդիպումն ուղակի գալոչկա դնելու համար չէ: Այն օրենքի պահանջ է, որը պահանջվում է նախաձեռնողից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից:
5.	*<u>Էջմիածին քաղաքի բնակիչ</u>* Որոշակի հարցեր կան, որոնք բնապահպանական չեն: Օրինակ շենքից շենք հեռավորությունը բավական մոտիկ կլինի 10 հարկի դեպքում: Դա տեխնիկական հարց է, ոչ թե բապահպանական:	*<u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u>* Փորձեմ ավելի համապարփակ ինֆորմացիա տալ: Նախագիծը բնապահպանական փորձաքննությունից զատ նաև անցելու է համալիր փորձաքննություն, որի ժամանակ ուսումնասիրվում է նախագծի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության շինարարական բոլոր նորմերին, որն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ համապատասխան հանձնաժողովի ձևավորմամբ: Եթե որևէ նախագծային սխալ լուծում լինի, հնարավոր չի որ նախագիծը ստանա համալիր փորձաքննության դրական եզրակացություն:
	<u>Էջմիածին քաղաքի բնակիչ</u> Այսօրվա դրությամբ Էջմիածնում շարժը շատ բարդ է, հատկապես կոնտրոնական փողոցներում: Այստեղ էլ լիքը մեքենաներ կլինեն:	*<u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u>* Ձեր բարձրացրած հարցը արդիական է, ոչ միայն Էջմիածնի, այլ նաև Երևանի համար, որն անհամամետ ավելի մեծ քաղաք է, քան Էջմիածինը, բայց նախագծային լուծումներում հնարավորինս այդ ամենը հաշվի է առնված՝ մուտքը, ելքերը և այլն: Ինքը կենտրոն հատված է և այսպես, թե այնպես տվյալ տարածքում այդ աշխուժությունը կա, բայց այդ ամենը հնարավորինս հաշվի է առնված: *<u>Նախագծի գլխավոր ճարտարապետ Աշոտ Հարությունյանը հավելեց.</u>* Հարգելի քաղաքացիներ, եթե հիշում եք մենք նախկինում էլի հանդիպում ունեցել ենք և մի անգամ արդեն քննարկվել է այս նախագիծը: Չնայած այսօր բնապահպանական հարցերով ենք հավաքվել, սակայն ուզում եմ մի երկու բան ասել: Նախկին քննարկումներից հետո նախագծում շատ բան փոխվել է, հաշվի են առնվել ձեր բարձրացրած հարցերը, օրինակ այն որ դուք դեմ էիք, որ շենքի մուտքը լինի ձեր շենքի դիմացից: Մենք այն փոխել ենք, մուտքերը, ելքերը տրանսպորտային մոտեցումներն այպես ենք արել, որ ձեր շենքի բակի միջով մեքենա չանցնի: Ես սա բարձրաձայնում եմ նրա համար, որ մեր անցած քննարկումները ապարդյուն չէին: Ես էլ որպես ճարտարապետ վատ բան չեմ անում, քանի որ ճարտարապետը պիտի ստեղծի միջավայր, որը ինչքան լավը լինի, հասրակությունն այնքան առողջ ու լավն է լինելու: Այն ինչ մենք հիմա ունենք տվյալ տարածքում, դա առողջ միջավայր չէ: Բոլորդ դա գիտեք, թե ինչ պայմաններ են այնտեղ, ինչ հասրակություն էր այդտեղ, ովքեր էին մտնում այնտեղ ու ինչ ասես անում էին: Կինոթատրոնի գաղափարը պահում ենք ու ուզում ենք, որ լավ բան ստացվի: Ինչ վերաբերում է նորմերին, քաղաքաշինական կոմիտեով այս բոլորն անցնելու է. հեռավորությունները, սեյսմիկ նորմերը, նախագծային լուծումները և այնպես է, որ էլի ենք հանդիպելու: Ես էլ եմ այս քաղաքից, այստեղ ապրում եմ ու այստեղից չեմ գնալու հաստատ ու ամեն օր ձեզ բարև եմ տալու:
	<u>Էջմիածին քաղաքի բնակիչ</u> Ես շինարարությանը դեմ չեմ, պարզապես կան հարցեր, որոնք այսօր շատ դժվար է լուծել: Դա ընդհանուր խնդիր է մեզ մոտ:	*<u>Աշոտ Հարությունյան, նախագծի գլխավոր ճարտարապետ</u>* Տրանսպորտի հարցը հիմա բավականին լուրջ է և ոչ մի օրենսդրական մեխանիզմ չկա դեռևս, որ այդ հարցը լուծի: *<u>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը հավելեց.</u>* Հիմա որոշ շենքերում պարտադիր պահանջ է, որպեսզի լինեն

		ստորգետնյա ավտոկայանատեղիներ, ինչը նաև տվյալ նախագծում է հաշվի առնված. 64 մեքենայի համար նախատեսված երկհարկ ավտոկայանատեղի է նախատեսված:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Ճարտարապետական առաջադրանքը հիմա ինչ փուլում է:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Վերջնական նախագիծն արդեն պատրաստ է: *Նախագծի գլխավոր ճարտարապետ Աշոտ Հարությունյանը հավելեց.* Եթե նկատի ունեք ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ապա այն վաղուց տրված է:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Իսկ շին. թույլտվությունը:	*Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը հավելեց.* Շին. թույլտվությունը հիմա չի կարող լինել, այն լինում է այն ժամանակ, երբ նախաձեռնողը արդեն ձեռք է բերած լինում երկու փորձաքննությունների դրական եզրակացությունները՝ և բնապահպանականը և համալիրը: Սրանք դեռևս գործընթացի մեջ են և մինչև երկուսի դրական եզրակացությունները չլինի նախաձեռնողը չի կարող ստանալ շինարարության թույլտվություն:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Երկրորդ հանրային լսումն ինչին է վերաբերելու:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Երկրորդ հանրային լսումը ևս բնապահպանական է՝ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ, որը կարծում եմ կլինի ոչ շուտ, քան 1.5 ամիս հետո, եթե ոչ ավելին:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Գիտեք ինձ ինչ է հետաքրքրում, ինչ որ մի հաշվետվություն կա:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Եթե բնապահպանականի մասին է խոսքը, ապա այո կա առանձին հաշվետվություն, որը կոչվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գանահատման հաշվետվություն, որը տրվում է նաև համայնքապետարանին, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարությունը այն տեղադրում է իր պաշոտական կայքում, որը բաց է բոլորի համար:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Հիմա չունեք այդ հաշվետվությունը: Ինչն եք մանրամասն ուսումնասիրել, օրինակ հաշվետվության մեջ քամու հաշվարկ արել եք, թե ոչ:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Այս պահին ամբողջ հաշվետվությունը ձեռքիս տակ չունեմ, բայց եթե տաք ձեր էլեկտրոնային հասցեն, այն հենց այսօր կարող եմ ուղարկել ձեզ, կամ դուք կարող եք այն վերցնել համայնքապետարանից: Ում հետաքրքիր է թե նախագծային լուծումների հետ կապված մանրամասները, թե բնապահպանակը ցանկացած ժամանակ կարող են դիմել ինձ, նախաձեռնողին կամ գալ նախաձեռնողի գրասենյակ՝ մանրամասն լուծումներին ծանոթանալու համար: Քամու հաշվարկը մենք չենք անում, այդ տվյալները վերցվում է շինարարական կլիմայաբանության նորմերից: Ինչ վերաբերում է բնապահպանական մասին, ապա դրա շրջանակներում մենք դիտարկել են այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են երկրաբանությանը, հիդրոերկրաբանությանը, սեյսմիկ անվտաբգությանը, գրունտների շերտերին, ստորերկրյա ջրերի մակարդակին, տվյալ տարածքի բնակլիմայական պայմաններին, նրանց համապատասխանությանը նախագծային լուծումներին, որովհետև դրանց հիման վրա են նաև իրականացվում շենքի ջեռուցման, օդափոխության, էներգաարդյունավետության լուծումները: Բացի այդ հաշվի է առնվել շինարարության փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները, որոնց մասին արդեն ասել եմ:
	Արմեն Մուրադյան, էջմիածին քաղաքի բնակիչ Իսկ իսնսոլացիան:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Ինսոլացիան բնապահպանական հարց չէ, այն արվում է համապատասխան հաշվարկների հիման վրա և պետք է համապատասխանի համապատասխան նորմերին: Այդ

		համապատասխան մասնագետը:
	Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ Ես հաշվել եմ, մենք 10 հարկի դեպքում իսնսոլացիա չենք կարողանում ապահովել:	*Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ* Դա տեխնիկական հարց է, եթե դուք ունեք հաշվարկներ և փաստարկներ, ապա խնդրում եմ ձեր հաշվարկներով հանդերձ մոտենալ մեր ճարտարապետներին և համապատասխան հաշվարկ անողներին, համեմատեք այն և հիմնավորեք: Եթե ունեք բողոք, եթե ձեր հաշվարկները հիմնավորված են, ապա դրանք ներկայացրեք և ձեզ կպատասխանեն: Խնդրում եմ անհիմն որևէ հարց չբարձրացնել: *Սկսվեց որոշակի բանավեճ ներկաների միջև կապված նրա թե, արդյոք տվյալ բնակիչը ընդհանրապես կարող է նման ինսոլյացիոն հաշվարկներ իրականացնել, թե ոչ և եթե նման հաշվարկներ է անում, ապա այդ երբվանից: Հարց տրվեց նաև, թե նա ինչ մասնագետ է, որին այդպես էլ պատասխան չտրվեց:* *Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը ևս մեկ անգամ հավելեց, որ.* Բոլոր նախագծային լուծումներն իրականացվել են նախագծահատակագծային առաջադրանքի հիման վրա և եթե մանրամասներ են պետք հաշվետվություններից, նախագծային լուծումներից, ապա կարող են տարմադրել էլեկտրոնային հասցե, որին այն կուղարկվի կամ ցանկացած ժամանակ կարելի է դիմել նախաձեռնողին, նախագծողին կամ համայքապետարանին և դրանք ձեզ կտրամադրվեն տեղում: *Արթուր Մակարյանը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ը ներկայացուցիչը, հավելեց.* Այսօր մենք ճանապարհների հետ կապված խոսում ենք բոլորս լավ իմանալով, որ քաղաքապետարանի դիմաց և նրա կողքերով լիքը տեղեր կան մեքենա կայանելու համար, չնայած այն բանին, որ բնակելի համալիրի համար ավտոկայանտեղի լինելու է, որը մի բան էլ շատ է: Հաստատ ձեր ջրի խողովակին չի միացվելու, որ մտածեք թե ջուրը կքչանա, այլ հակառակը առանջին ջուր է բերվում: Շենքն ունենալու է առանձին էլ. ենթակայան, որը վստահ եմ, որ իր հզորությամբ ծառայելու է նաև ձեզ համար: Ինչ վերաբերում է գազին, ապա այն առանձին գծով է բերվելու, ձեզ որևէ նեղություն չի տալու, այլ ընդհակառակը հնարավոր է որ վթարների հետ կապված դուք այդ գծից այլընտրանքային գազ ստանաք: Այսինքն բոլոր առումներով այս ամենն օգուտ է, այլ ոչ թե վնաս: Մուտքերն հակառակ կողմից է և վաս չի տալիս: Այնպես, որ ձեր մտահոգություններն էլ ենք հասկանում ու կփորձենք հնարավորինս քիչ նեղություն ձեզ տալ: Ասում եք էսի արևն է փակում, սա այնպես, նա այնպես, քաղ. շինը այդ բոլորը նայում է ու ոչ մի պաշտոնյա հիմար չի, որ սխալ նախագծի տակ ստորագրի: Ու եթե ուզում էլ տվեք ձեր e-mail-ը ու ձեզ բոլոր նյութերը կուղարկվի: *Այս ընթացքում մասնակիցներին տրամադրվեցին նախագծի մանրամասների վերաբերյալ հակիրճ տեղեկատվական նյութերը, որոնք մինչ այդ էլ դրված էին սեղանին:*

		Այստեղ ոչ բողոքի հարց կա, ոչ էլ, ուղղակի քննարկում ենք, թե ինչ խնդիրներ են առաջանում: Օրինակ քանդման ժամանակ ահռելի մեծ փոշի էր դուրս գալիս, տեսեք ես ձեզ ոչ հարկայնությունից եմ հարցնում, ոչ կառուցվողը մակերեից եմ հարցնում, դա երբ ճարտարապետը բարեհաճի քննարկում անի, էլի կքննարկենք: *Նախաձեռնող կողմը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի տնօրեն Վ. Դարբինյանը, միջամտեց բնակչի և ճարտարապետի միջև ընթացող խոսակցությանը, հավելելով, որ.* Անցած անգամվա քննարկումը, որի մասին դուք ասում եք, մենք կամ նախագծող կազմակերպությունը որևէ պարտավորվածություն չունեինք անցկացնելու: Դա մենք կազմակերպեցինք, դա մեր ընկերության բարի կամքն էր՝ ձեր մտահոգություններին, ձեր մտավախություններին ծանոթանալու և դրանք քննարկելու համար: Դա օրենքով պարտադրված չէր ոչ մեզ, ոչ նախագծող կազմակերպությանը, դա հանրային լսում չէր: Հանրային առաջին լսումը սա է: *<u>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը ևս մեկ անգամ հավելեց, որ.</u>* Որպեսզի անհընդահատ այսպես շարունակական դիսկուսիայի չվերածվի, առաջարկում եմ հետևյալը. բոլոր նախագծային լուծումները՝ համապատասխան գծագրերով՝ համայնքապետարանում առկա է, ցանկացած ժամանակ, ցանկացած բնակիչ կարող է մոտենալ քաղաքաշինության վարչություն, համայնքապետարանի ցանացած վարչություն, իր խնդիրն ասել և նրան այդ ամենը կտրամադրվի: Նույն ձևով դուք կարող եք դիմել նախաձեռնող կողմին, ինձ: Մեր բոլոր կոնտակտային տվյալները հասնելի են նաև Էջմիածնի համայնքապետարանում կամ հենց հիմա մասնակիցների ցուցակից դրանք կարող եք դրանք վերցնել: Եթե որևէ հարց ունեք, իմացեք, որ ցանկացած ժամանակ բաց ենք նախագծին առնչվող ցանկածաց ինֆորմացիա, նախագծային լուծումների մանրամասներ տրամադրելու համար, իսկ թղթային հակիրճ ինֆորմացիան արդեն տվեցի, եթե դրանից էլ հարցեր կառաջանան էլի պատրաստ ենք: Բացի դրանից իմացեք նաև հաշվեվությունը հասանելի է լինելու նաև ՇՄՆ կայքում: Ցանկացած ոք այն կարող է նայել և իր առաջարկություններն ու դիտողություններն ուղարկել նաև նախարարություն: Դրա համար դեռևս բավական ժամանակ կա: Այս ամենը հենց նրա համար է, որ բնակիչներն իրենց կարծիքները, եթե ինչ-որ առարկություններ ունեն, կարողանան ժամանակին լուծել՝ բնակչի հետ համագործակցելով, որպեսզի բոլոր կողմերն էլ գոհ մնան: Դեռևս ունենք երկրորդ հանրային լսում: Նայում եք, կարդում եք, հարցերը հանում եք, կարող եք մինչև երկրորդ հանրային քննարկումը դիմել, կարող եք երկրորդ հանրային քննարկմանը դիմել:
	<u>Էջմիածին քաղաքի բնակիչ</u> Երկրորդ հանրային լսումը երբ է:	*<u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u>* Նվազագույնը 1.5 ամիս հետո ի նկատի ունեցեք: *<u>Արթուր Մակարյանը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ը ներկայացուցիչը, հավելեց.</u>* Ասեմ, որ բոլոր նորմերով նախագիծն անցնում, է, եթե որևէ նորմով

		հետ: Շուրջ մեկ տարի է նախագիծը տարբեր գերատեսչություններով գնում ու հետ է գալիս: Հիմա արդեն ամեն ինչ համաձայնեցված է, ինչը նշանակում է, որ որևէ անհապատասխանություն կամ անօրինական որևէ բան չկա: Համայնքի բնակիչ. Էն կողքի հյուրանոցը որ կա, ինչի չեք սարքում, 20 տարի է տարածքը լրիվ խոզանոց է:

Դարձյալ ներկաների միջև ծավալվեց նախատեսվող գործունեության հետ ընդհանրապես կապ չունեցող բանավեճ, որի արդյունքում Քրիստինե Սահակյանը հորդորեց չքննարկել այլ հարցեր, թե ով ինչ պիտի առնի կամ չառնի: Նա ներկաներին հիշեցրեց, որ այսօրվա քննարկումը վերաբերվում է կինոյի շենքի տարածքին և խնդրեց չընդլայնվել:

Նա հորդորեց նախագծի շրջանակներից դուրս հանրային լսմանը որևէ հարց չքննարկել և հանրային լսումը համարել ավարտված, եթե նախագծի հետ կապված այլ հարցեր չկան:

Մասնակիցների կողմից այլ հարցեր չբարձրացվեցին:

Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանատու՝ Մ.Պողոսյան,
Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական

Քննարկումների վարող՝ Վասպուրական Դավթյան,
Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ

Արձանագրող՝ Ք. Սահակյան,
բնապահպանության մասնագետ

Ձեռնարկող՝ Վ. Դարբինյան,
«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, տնօրեն